Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 16502 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 5847 մտից, 3774 ելից, 6881 ներքին:

2026 թվականի առաջին կիսամյակում ստացվել է 181 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 99 քաղաքացի: 99 քաղաքացու դիմումներին պատասխանվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 16 քաղաքացի, բոլոր 16 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 24 դիմում է ստացվել, ստացված 24 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 14 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 11 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 1 քաղաքացի և ստացել է դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմել է 3 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 5 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 8 դիմում: